

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողական ծառայության փորձագետ Նարեկ Քասյանի 2020 թվականի հոկտեմբերի 23-ից 2021 թվականի ապրիլի 23-ը ընկած ժամանակահատվածի համար:

Ես՝ Նարեկ Քասյանս, Վերահսկողական ծառայությունում որպես փորձագետ աշխատում եմ 2020 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N 64 պայմանագրի համաձայն: 2020 թվականի հոկտեմբերի 23-ից 2021 թվականի ապրիլի 10-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Նոտարների և սնանկության կառավարիչների գործունեության օրինականության ստուգում, ինչպես նաև նոտարական պալատի կողմից ներկայացված հաշվետվությունների ուսումնասիրություն,
2. Վերահսկողական գործառույթների իրականացման ժամանակ ի հայտ եկած կարգապահական վարույթ հարուցելու առիթներով թվով 10 վարույթի հարուցում ,
3. Ընթացիկ ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված ոչ օրինական գործողություններ իրականացրած նոտարների և սնանկության կառավարիչների այդպիսի գործելաոճի շարժառիթների և դրդապատճառների բացահայտում և կանխարգելում,
4. Մշակել և Վերահսկողական ծառայության պետի, ինչպես նաև 2-րդ բաժնի պետի հաստատմանն եմ ներկայացրել նոտարների և սնանկության կառավարիչների վերաբերյալ թվով 23 գրություն,
5. Պատասխանել եմ քաղաքացիների և պետական մարմինների կողմից Վերահսկողական ծառայությանն ուղղված մի շարք գրությունների,
6. Ապահովել եմ կառավարությունից ստացված թվով 3 հանձնարարականների կատարումը:

Հարգանքով՝



Նարեկ Քասյան

23.04.2021